Երկրորդ ընթերցում

լրամշակված նախագիծ

Կ-581[1]-05.05.2023-ՊԱ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

«ԵՐԵԽԱՅԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Երեխայի իրավունքների մասին» 1996 թվականի մայիսի 29-ի ՀՕ-59 օրենքի 9-րդ հոդվածում լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր հինգերորդ մաս՝

«Բռնության ենթարկված երեխայի՝ պաշտպանության կամ աջակցության տրամադրման նպատակով համապատասխան մարմիններ ուղղորդման կարգը, բռնության ենթարկված երեխային տրամադրվող աջակցության ձևերը և տրամադրման կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:»:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում սույն օրենքից բխող ենթաօրենսդրական ակտն ուժի մեջ մտնելու պահից, որը ընդունվում է սույն օրենքի պաշտոնական հրապարակումից հետո վեց ամսվա ընթացքում:

Տեղեկանք

փոփոխվող հոդվածների վերաբերյալ

Կ-581[1]-05.05.2023-ՊԱ-011/1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

«ԵՐԵԽԱՅԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Երեխայի իրավունքների մասին» 1996 թվականի մայիսի 29-ի ՀՕ-59 օրենքի ~~(այսուհետ՝ Օրենք)~~ 9-րդ հոդվածում լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր հինգերորդ մաս՝

«Բռնության ենթարկված երեխայի՝ պաշտպանության կամ աջակցության տրամադրման նպատակով համապատասխան մարմիններ ուղղորդման կարգը, բռնության ենթարկված երեխային տրամադրվող աջակցության ձևերը և տրամադրման կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:»:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում սույն օրենքից բխող ենթաօրենսդրական ակտն ուժի մեջ մտնելու պահից, որը ընդունվում է սույն օրենքի պաշտոնական հրապարակումից հետո վեց ամսվա ընթացքում:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ «ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ԵՐԵԽԱՅԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ԸՆՏԱՆԻՔՈՒՄ ԲՌՆՈՒԹՅԱՆ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ, ԸՆՏԱՆԻՔՈՒՄ ԲՌՆՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԸՆՏԱՆԻՔՈՒՄ ՀԱՄԵՐԱՇԽՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ (Կ-581-05.05.2023-ՊԱ-011/1, Կ-581[1]-05.05.2023-ՊԱ-011/1, Կ-581[2]-05.05.2023-ՊԱ-011/1) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկությունն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1.	***ԱԺ պատգամավոր Վիլեն Գաբրիելյան***	«Ոստիկանության մասին» օրենքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին օրենքի նախագիծ	Քրեական ոստիկանության և համայնքային ոստիկանության լիազորությունների հատումից, գործառույթների կրկնությունից խուսափելու նպատակով առաջարկում ենք նախագիծը լրացնել նոր 2-րդ հոդվածով. «Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասում՝ 1) լրացնել նոր 6-րդ կետ հետևյալ բովանդակությամբ. «6) Կառավարության սահմանած կարգով իրականացնել Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 85-րդ հոդվածի համաձայն պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատված դատապարտյալների, այն անձանց, ում նկատմամբ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 84-րդ հոդվածի համաձայն պատիժը պայմանականորեն չի կիրառվել կամ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 86-րդ հոդվածի համաձայն պատժի կատարումը հետաձգվել է, քրեակատարողական հիմնարկներից և կարգապահական գումարտակից պատիժը լրիվ կրելուց ազատված անձանց, կենցաղային ոլորտում պարբերաբար	Ընդունվել է Կատարվել է համապատասխան փոփոխություն:	

			իրավախախտում կատարած անձանց, պոռնկությամբ զբաղվող անձանց, բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող հաստատություններում հաշվառված՝ ալկոհոլամոլություն, թմրամոլություն, դեղամոլություն կամ թունամոլություն ախտորոշում կամ հոգեկան առողջության խնդիր ունեցող անձանց, ինչպես նաև մշտական բնակության վայր չունեցող թափառաշրջիկ կամ մուրացիկ անձանց պրոֆիլակտիկ (կանխարգելիչ) հաշվառում:», 5-րդ կետում հանել «ինչպես նաև» բառերը, ինչպես նաև «հաշվառում» բառից հետո լրացնել «, ինչպես նաև անչափահասների հանցավորության կանխարգելմանն ուղղված աշխատանքներ ու միջոցառումներ» բառերը:»: Ըստ այդմ նախագծի վերնագրում առաջարկում ենք «ԼՐԱՑՈՒՄ» բառը փոխարինել «ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ» բառերով՝ հաշվի առնելով լրացումների մեկից ավելի լինելը և փոփոխություն կատարելը:		
2.		«Ոստիկանության մասին» օրենքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին օրենքի նախագծի 2-րդ (լրամշակված 3-րդ) հոդված	Առաջարկում ենք նախագծի 2-րդ (լրամշակված 3-րդ) հոդվածը լրացնել նոր 2-րդ նախադասությամբ՝ հետևյալ բովանդակությամբ. «Սույն օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված՝ Կառավարության որոշումը կընդունվի սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ եռամսյա ժամկետում:»: Առաջարկությունը պայմանավորված է օրենքից բխող ենթաօրենսդրական ակտի ընդունման անհրաժեշտությամբ:	Ընդունվել է Կատարվել է համապատասխան փոփոխություն:	
3.	***ՀՀ կառավարություն***	«Երեխայի իրավունքների մասին» օրենքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդված	Առաջարկում ենք հանել «(այսուհետ՝ Օրենք)» ձևակերպումը՝ հիմք ընդունելով այն հանգամանքը, որ «Երեխայի իրավունքների մասին» օրենքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագծում «Երեխայի իրավունքների մասին» օրենքին այլևս հղում չի կատարվում:	Ընդունվել է Կատարվել է համապատասխան փոփոխություն:	